

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

ԼԻԼԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*ՀՀ արդարադատության նախարարության
հակակոռուպցիոն և քրեակարարողական
քաղաքականության մշակման վարչության փորձագետ*

LILIT HAYRAPETYAN

*Expert of Anti-Corruption and Penitentiary Policy
Development Department,
Ministry of Justice of the Republic of Armenia*

ЛИЛИТ АЙРАПЕТЯН

*Эксперт департамента развития антикоррупционной и
пенитенциарной политики,
Аппарата Министерства юстиции РА*

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՎԱԾ ՈՐՈՇ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**PECULIARITIES OF QUALIFYING CERTAIN
CRIMES AGAINST JUSTICE**

**ОСОБЕННОСТИ КВАЛИФИКАЦИИ ОТДЕЛЬНЫХ
ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ ПРАВОСУДИЯ**

ՀՀ քրեական օրենսգրքում «Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ գլխի նախատեսումն արդարադատություն իրականացնելու լիարժեք մեխանիզմ է և անհրաժեշտ նախապայման: Այս հանցագործությունները հեղինակագրվում են դատական իշխանությունը, ամրապնդում են հասարակությունում անվտանգություն պետական իշխանության այս թեկնկատմամբ: Ընդ որում՝ առավել մեծ հանրային վտանգավորությամբ աչքի են ընկնում հանցագործությունների այն խումբը, որոնք հենց կատարվել են դատական իշխանության և իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից: Այնինչ դրանք են կոչված պահպանելու օրենքները, պաշտպանելու քաղաքացիների շահերը:

Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների գերակշռող մասում սուբյեկտը հատուկ է: Ավելին՝ օրենսդիրը հատուկ սուբյեկտի հատկանիշները տարբեր հանցակազմերում մատնացույց է անում տարբեր կերպ: Մի դեպքում սուբյեկտի մասին ուղղակիորեն խոսվում է հողվածի դիսպոզիցիայում,

օրինակ՝ վկայի կամ տուժողի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելը (ՀՀ քրեական օրենսգիրք, 339-րդ հոդված¹): Մյուս դեպքերում հատուկ սուբյեկտի հատկանիշները հավաստվում են քրեական օրենքի մեկնաբանության ճանապարհով, օրինակ՝ «փախուստն ազատագրկման վայրից, կալանավորվածներին պահելու վայրից կամ ձերբակալվածներին պահելու վայրից» հանցակազմում (ՀՀ քրեական օրենսգիրք, 355-րդ հոդված) սուբյեկտի մասին նշում չկա: Սակայն սույն հոդվածի 3-րդ մասի (փախուստ կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե քրեական վարույթը կարճվել կամ արդարացման դատավճիռ է կայացվել այն գործով, որով անձը դատապարտվել էր ազատագրկման, կալանավորվել կամ ձերբակալվել էր) մեկնաբանման արդյունքում ակնհայտ է, որ այն հատուկ է և այդպիսին կարող է լինել միայն այն անձը, որն ազատագրկման կամ կալանքի է դատապարտված, որի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը, կամ որը ձերբակալվել է հանցագործության մեջ կասկածվելու հետևանքով²:

Այսպես՝ արդարադատության դեմ ուղղված մի շարք հանցագործություններում օրենսդիրը սահմանել է հանցակազմեր, որոնցում սուբյեկտի մասին նշում չկա, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի համաձայն.

«2. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևորվել է դատավարությանը մասնակցող անձանց վիրավորելով (...),

3. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևորվել է պաշտոնեական լիազորությունների իրականացման առնչությամբ դատավորին վիրավորելով (...) »:

Քրեական օրենքի մեկնաբանությունից պարզ է, որ այս հանցագործության սուբյեկտն ընդհանուր է: Դա պայմանավորված է նրանով, որ հանցակազմի օբյեկտիվ կողմում ընդգրկված գործողությունները (անգործությունը) վերագրված չեն կոնկրետ անձի: Ի դեպ, այս հոդվածի առաջին մասի հանցակազմի սուբյեկտը հատուկ էր, այն է՝ վկա, տուժող կամ պաշտպան, իսկ օբյեկտիվ կողմը դրսևորվում էր դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելով կամ դատավորի կարգադրությանը չենթարկվելով կամ դատական նիստի կարգը խախտելով կամ այլ գործողություն կատարելով և վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին: Սակայն այն հակասահմանադրական է ճանաչվել 2010 թվականին ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ, այն հիմնավորմամբ, որ նմանօրինակ իրավակարգավորումը, ըստ էության, ոչ համաչափ վերաբերմունք էր դրսևորում դատավարության մասնակիցների նկատմամբ, հանցակազմով չէր սահմանվել բոլոր այն հնարավոր սուբյեկտների, մասնավորապես՝ միևնույն գործընթացին մասնակից, դատավարական որոշակի կարգավիճակ ունեցող անձանց շրջանակը, որոնք գործնականում կարող էին կատարել տվյալ հանցագործությունը՝ դրանով իսկ

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ընդունվել է 18.04.2003 թ., ուժի մեջ է մտել 01.08.2003թ.: ՀՀՊՏ 2003.05.02/25(260), հոդ. 407:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, դատագիրք բուհերի համար, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 942:

խախտելով օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը³: Արդյունքում՝ գործող կարգավորմամբ նշված հանցակազմի սուբյեկտն ընդհանուր է, իսկ օբյեկտիվ կողմը դրսևորվում է առաջին մասում՝ դատավարության մասնակիցներին վիրավորելով, իսկ երկրորդ մասում՝ դատավորին վիրավորելով: Կարծում ենք, որ օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի խախտում չի կարող դիտարկվել այն իրավիճակը, երբ անձինք դատական նիստին մասնակցում են տարբեր իրավունքների, պարտականությունների և կարգավիճակի ուժով. դատավարության մասնակիցները՝ դատավարական կարգավիճակի, դատական նիստերի քարտուղարն ու դատական կարգադրիչը՝ ծառայողական կամ աշխատանքային պարտականությունների, իսկ դատական նիստին մասնակցող այլ անձինք՝ գործերի քննության հրապարակայնության սկզբունքից ծագող իրավունքի ուժով: Այս պարագայում բոլորի, մասնավորապես՝ դատավարության մասնակից հանդիսացող և դատավարության մասնակից չհանդիսացող անձանց նույն գործողությունները համարժեք գնահատելն արդարացված չէ, քանի որ դատավարության մասնակից հանդիսացող անձինք դատավարական օրենսգրքերով ունեն դատական նիստում կարգ ու կանոնը պահպանելու **պարտականություն** (մեղադրյալի պարտականությունը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի⁴ 65-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետ, տուժողինը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետ, կամ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 7-րդ մասով դատավարության մասնակիցները և դատական նիստերին ներկա անձինք պարտավոր են պահպանել սույն օրենսգրքով սահմանված կարգուկանոնը⁵), և որի մասին նրանց նաև պարզաբանվում է դատական նիստերում, իսկ դատավարության մասնակից չհանդիսացող անձանց համար նմանատիպ պարտականություններ սահմանված չեն, որպիսի պայմաններում նրանց հնարավորություններն իրենց վարքագծի իրավական հետևանքները կանխատեսելու հարցում հավասար չեն: Հետևաբար՝ նշված հանցակազմի օբյեկտիվ կողմն իրականացնող, ոչ հավասար պայմաններում գտնվող սուբյեկտներին չտարբերակելու դեպքում կիրառվող հարկադրանքն անհամաչափ կլինի:

Հատկանշական է նաև, որ գործող կարգավորումը սուբյեկտների շրջանակում չի բացառում դատավորին, քանի որ նա ևս կարող է վիրավորել դատավարության մասնակցին, որի պարագայում արարքի հանրային վտանգավորությունն ավելի է մեծանում: Վերը նշված նույն պատճառաբանությամբ, ինչպես

³ Տե՛ս ՍԴ 14 հունվարի 2010 թ., ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՍԴԴ-851 որոշումը:
Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=56077>:

⁴ Տե՛ս ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 01.07.1998 թ., ուժի մեջ է մտել 12.01.1999 թ.: ՀՀՊՏ 1998.09.21/22(55): Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentView.aspx?docid=68011>:

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018 թ.: ՀՀՊՏ 2018.03.05/16(1474), հոդ. 208:
Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120057>:

հավասար կարգավիճակներ չունեն դատավարության մասնակիցը և այդպիսին չհանդիսացող անձինք, այդպես էլ հավասար կարգավիճակ չունեն դատավորը և դատավարության մասնակիցը, առավել ևս դատավարության մասնակից չհանդիսացող անձը: Ինչ վերաբերում է դատավորի կողմից վերոգրյալ հոդվածի 3-րդ մասով սահմանված օբյեկտիվ կողմը կատարելու հնարավորության հետ, ապա ըստ օրենսդրի՝ այն ևս բացառված չէ: Խոսքը վերաքննիչ և վճռաբեկ վարույթում դատական գործերի կոլեգիալ քննության մասին է: Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածում լրացնել նոր՝ 4-րդ և 5-րդ մասեր.

«4. Սույն հոդվածի երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են դատավարության մասնակցի, դատական նիստերի քարտուղարի կամ դատական կարգադրիչի կողմից (...),

5. Սույն հոդվածի երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են դատավորի կողմից (...):»:

Հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածին, որի դիսպոզիցիան բաղկացած է երկու ինքնուրույն հանցակազմերից՝ քաղաքացիական ու վարչական գործերով ապացույցների կեղծում և քրեական գործերով ապացույցների կեղծում: Առաջին մասի սուբյեկտների շրջանակն է գործին մասնակցող անձը կամ նրա ներկայացուցիչը, իսկ երկրորդ մասում՝ հետաքննություն կատարող անձը, քննիչը, դատախազը և պաշտպանը: Օրենսդրի կողմից սուբյեկտների նման շրջանակ սահմանելը կամայական չէ: Այն պայմանավորված է համապատասխան դատավարությունների ընթացքում անձի ապացույցներ ձեռք բերելու և ներկայացնելու պարտականությամբ: Եթե քաղաքացիական և վարչական դատավարությունում ապացուցման պարտականությունը կրում են գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցները, ինչպես նաև դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները ներկայացնում են գործին մասնակցող անձինք), ապա քրեական դատավարությունում այդ պարտականության կրողը մեղադրանքի կողմն է: Հետևաբար՝ քրեական գործով ապացույցներ կեղծելու հանցակազմում պաշտպանին մեղադրանքի կողմի հետ հավասար՝ հատուկ սուբյեկտների շարքում նախատեսելը հիմնավորված չէ: Ավելին, մեղադրանքի կողմն ապացուցման պարտականությունը կատարում է ի պաշտոնե, և նրա կողմից ապացույց կեղծելն ավելի մեծ հանրային վտանգավորություն է ներկայացնում, քան ոչ պաշտոնատար անձի կողմից սույն արարքը կատարելը: ՀՀ Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ այն չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է դիտարկվել որպես խտրականություն, և թույլատրելի է համարվում օբյեկտիվ հիմքով ու իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում⁶:

⁶ Տե՛ս ՍԴ 4 մայիսի 2010 թ. քաղաքացի Վարդան Հարությունյանի դիմումի հիման վրա՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված

Փաստորեն, եթե վերը նշված՝ «դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը» հանցակազմի (ինչպես պատճառաբանել է սահմանադրական դատարանը) հատուկ սուբյեկտների շարքում մեղադրողին բացառելն արդարացված չէր, քանի որ մեղադրանքի և պաշտպանության կողմերը դատական նիստի կարգ ու կանոնը պահպանելու հարցում ունեցել են հավասար պարտականություններ, ապա սույն՝ «ապացույցները կեղծելը» հանցակազմի 2-րդ մասում հետաքննություն կատարող անձի, քննիչի և դատախազի հետ մեկտեղ սուբյեկտների շարքում պաշտպանին ներառելն արդարացված չէ, քանի որ, ինչպես նշվեց վերոգրյալում, քրեական դատավարությունում ապացույցների ձեռք բերման և ներկայացման գործընթացում նրանք հավասար պարտականություններ և հնարավորություններ չունեն: Ավելին՝ նման պարագայում ոչնչով հիմնավորված չէ այն հանգամանքը, թե օրենսդիրն ինչու նշված արարքի կատարման սուբյեկտ չի ճանաչել նաև քրեական դատավարության մեղադրող կողմի և պաշտպանական կողմի մյուս մասնակիցներին, այն է՝ տուժողին և մեղադրյալին: Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 2-րդ մասում հատուկ սուբյեկտների շարքից հանել փաստաբանին:

Մինևույն ժամանակ հարկ ենք համարում ընդգծել, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում⁷ (այսուհետ՝ Նախագիծ) այս հանցակազմի օբյեկտիվ կողմը լրացվել է նաև «փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու» եղանակով (Նախագիծ 448-րդ հոդված): ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձի կողմից ապացույցները ոչնչացնելու կամ թաքցնելու կամ այլ եղանակով ապացույցի ձեռքբերմանը խոչընդոտելու դեպքի առկայությունն առաջացնում է քաղաքացիաիրավական պատասխանատվություն, այն է՝ վիճելի փաստի ապացուցման բեռի բացասական հետևանքը կրում է խոչընդոտող անձը: Հատկանշական է նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը յուրօրինակ պատասխանատվություն է սահմանում նաև ապացույցի իսկության վիճարկման դեպքի համար. գրավոր փաստաթղթի իսկությունը վիճարկվելիս, ապացույցի իսկական լինելու փաստն ապացուցում է ապացույց ներկայացրած կողմը, բացառությամբ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի իսկության վիճարկման դեպքերի (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր): Այնուամենայնիվ, քաղաքացիական պատասխանատվությունը չի բացառում մինևույն արարքի համար քրեական պատասխանատվությունը և չի առաջացնում կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտում: Հետևաբար՝ իրավաչափ ենք համարում սույն հանցակազմի օբյեկտիվ կողմի կատարումը «փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու» եղանակներով:

Ինչ վերաբերում է ծանրացնող հանգամանքներին, ապա կարծում ենք, որ ան-

դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՍԴԻ-881 որոշումը:

Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=57983>:

⁷ Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծ, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/2115/about>:

զգուշությամբ ծանր հետևանքները կարող են առաջանալ նաև քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով ապացույցներ կեղծելու արդյունքում:

Այժմ անդրադառնանք արդարադատության դեմ ուղղված մեկ այլ հանցագործությանը: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու համար: Նախ անդրադառնանք տվյալ հանցակազմի սուբյեկտին: Այս նորմի մեկնաբանությունից բխում է, որ սուբյեկտը հատուկ է, և այդպիսին կարող է լինել այն անձը, որից համապատասխանաբար ստորագրություն է վերցվել նախաքննության կամ հետաքննության տվյալները չհրապարակելու համար: Փաստորեն կարող ենք հավաստել, որ հանցակազմի առարկա չի հանդիսանում դոնփակ դատաքննության տվյալները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը սահմանում է դատական վարույթի հրապարակայնության սկզբունքը: Բայց մինևույն ժամանակ նախատեսվում է գործը կամ դրա մի մասը դոնփակ նիստում քննելու հնարավորություն, և օրենսգրքով սահմանվում է այն անձանց կոնկրետ շրջանակը, ովքեր կարող են ներկա գտնվել դատական նիստին: Այդպիսիք են դատական նիստերի քարտուղարը, դատական կարգադրիչները, դատավարության մասնակիցները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ընթերական, թարգմանիչը, մասնագետը, փորձագետը և վկան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, 16-րդ հոդվածի 6-րդ մաս): Նույն եղանակով դոնփակ դատաքննությանը ներկա գտնվելու անձանց շրջանակը (որոշակի փոփոխություններով) սահմանված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերով՝ համապատասխանաբար 17-րդ և 8-րդ հոդվածներում⁸: Նշված անձինք դատարանի կողմից ստորագրություն վերցնելու միջոցով նախազգուշացվում են օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները հրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին: ՀՀ քրեական օրենսգրքով առկա են բազմաթիվ հանցակազմեր, որոնցով վրա կհասնի նման անձանց քրեական պատասխանատվությունը, օրինակ՝ անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը (ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդված), բժշկական գաղտնիք հրապարակելը (ՀՀ քրեական օրենսգրքի 145-րդ հոդված), որդեգրման գաղտնիքը հրապարակելը կամ որդեգրման համաձայնություն տալուն հակելը կամ հարկադրելը (ՀՀ քրեական օրենսգրքի 169-րդ հոդված), առևտրային, ապահովագրական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկություն ապօրինի հավաքելը կամ հրապարակելը (ՀՀ քրեական օրենսգրքի 199-րդ հոդված) և այլն: Սակայն առաջարկվելիք՝ դոնփակ դատաքննության տվյալները հրապարակելու հանցակազմի սուբյեկտը, այսինքն՝ այն անձինք, որոնց դատարանի կողմից ստորագրություն վերցնելու միջոցով նախազգուշացվել է օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները

⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքը, ընդունվել է 05.12.2013, ուժի մեջ է մտել 07.01.2014 թ., ՀՀՊՏ 2013.12.28/73(1013). 1 հոդ. 1186.1: Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=87705>:

հրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին, հատուկ է (դատական նիստերի քարտուղար, դատական կարգադրիչներ, դատավարության մասնակիցներ, ընթերակա, թարգմանիչ, մասնագետ, փորձագետ, վկա): Կարծում ենք, որ նման արարքը հենց ունեցում է արդարադատության շահերի դեմ: Այս հիմնավորումն ինքնին վկայում է, որ օրենսդրի ուշադրությունից վրիպել է դոնփակ դատաքննության տվյալները հրապարակելով ունեցվող հասարակական հարաբերությունը, որը նույնպես ենթակա է քրեաիրավական պաշտպանության:

Մինչույն ժամանակ պրակտիկայում հնարավոր բազմաթիվ խնդիրներից խուսափելու համար, անհրաժեշտություն է առաջանում մեկնաբանել «դոնփակ դատաքննության տվյալներ» հասկացությունը: Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գործը կամ դրա մասը դոնփակ նիստում քննելու դեպքում հրապարակվում է դատական ակտի եզրափակիչ մասը, բացառությամբ այն դեպքերի, երբ այն պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք: Դատական ակտի՝ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող մասերը, ինչպես նաև այն մասերը, որոնք հիմք են հանդիսացել դոնփակ դատական քննություն անցկացնելու համար, հրապարակվում են դոնփակ նիստում»: Վերոգրյալից կարող ենք եզրակացնել, որ դոնփակ դատաքննության տվյալներ են ոչ միայն օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկատվությունը, այլև այն տեղեկատվությունը, որը հիմք է հանդիսացել դոնփակ դատաքննություն անցկացնելու համար: Իսկ այդպիսի հիմքերը նախատեսված են ՀՀ քրեական դատավարության 16-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց մասնավոր կյանքի, պատվի և արժանապատվության, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության, վարույթի մասնակիցների կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության նպատակով դատարանը դատավարության մասնակիցների միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ գործը կամ դրա մի մասը կարող է քննել դոնփակ դատական նիստում: Դատարանը դոնփակ դատական նիստում քննություն իրականացնում է նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

Հակառակ պարագայում, եթե դոնփակ դատաքննության տվյալները՝ որպես հանցակազմի առարկա, ավելի լայն մեկնաբանվեն, ապա նման պարագայում պարարտ հող կնախապատրաստվի անօրինականությունների համար:

Հարկ է նշել, որ եթե «հետաքննության և նախաքննության տվյալները հրապարակելը» հանցակազմն առկա է միայն այն դեպքում, երբ տվյալները հրապարակվում են նախաքննության կամ հետաքննության ընթացքում, ապա «դոնփակ դատաքննության տվյալները հրապարակելը» առաջարկվող հանցակազմը ժամանակային առումով սահմանափակված չէ:

Այսպիսով, հաշվի առնելով այս հանրորեն վտանգավոր արարքը կատարելու ունակ հատուկ սուբյեկտների շրջանակը և նրանց կողմից ունեցվող օբյեկտը՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածը շարադրել հետևյալ

բովանդակությամբ՝

«Նախաքննության, հետաքննության կամ դռնփակ դատաքննության տվյալները հրապարակելը՝

Առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը, կամ դռնփակ դատաքննության տվյալները հրապարակելը (...)»:

Annotation. Crimes against justice, as a rule, encroach on the totality of public relations that ensure the normal, legally regulated activities of the court to carry out its tasks, as well as on the activities of state bodies and relevant persons, who are called upon to promote the administration of justice. It should be noted that a rather large group of crimes against justice is comprised of socially dangerous acts, committed by government officials, who are supposed to abide and protect laws themselves, and protect the interests of citizens. The Criminal Code of RA offers solutions to some key issues of qualifying crimes against justice with a special subject, which also has gaps in its turn.

Аннотация. Преступления против правосудия, как правило, посягают на совокупность общественных отношений, обеспечивающих нормальную, регламентированную законодательством деятельность суда по осуществлению его задач, а также на деятельность государственных органов и соответствующих лиц, которые призваны содействовать осуществлению правосудия. Следует отметить, что довольно большую группу преступлений против правосудия представляют общественно опасные деяния, совершаемые представителями власти, которые призваны сами соблюдать, охранять законы и защищать интересы граждан. Уголовный кодекс РА также предлагает решения некоторых ключевых вопросов квалификации преступлений против правосудия со специальным субъектом, в которых также имеются некоторые пробелы.

Բանալի բառեր - արդարադատություն, դատարան, անհարգալից վերաբերմունք, ապացուցման պարտականություն, փաստաբան:

Keywords: justice, court, disrespect, burden of proof, advocate.

Ключевые слова: правосудие, суд, неуважение, обязанность доказывания, адвокат.

L. Հայրապետյան - ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության փորձագետ, էլ. փոստ՝ hayrapetyanlilit98@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 23.01.2020, տրվել է գրախոսության՝ 23.01.2020, երաշխավորվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր, իրավ. գիտ. թեկնածու Հ. Ա. Ազարյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 16.03.2020